ղիացի ։ Ամէն տարի գրեթէ 40 միլիոն Ֆրանքի վաճառք կը մտնէ աս քաղաքը, նոյնչափ ալ դուրս կ'ելլէ անկէ ։ Գրեթէ ամէն օր աշխարհքիս ամէն կողմէն նաւ կուգայ հոն ։ Բնակիչներուն երրորդ մասը Չինացի են, վեցերորդ մասը Մալէզիացի, մնացածները Անգղիացի, Հայ, Հնդիկ, Փորթուգալցի, Հրեայ, Արաբացի, Կորոմանտէլցի, Ճաւացի, Սիամացի և Պարսիկ ։

Տներն ալ շատցան ժողովրդեան բազմութեանը համեմատ. ասանկով Սինկափուրը գեղեցիկ քաղաք մը դարձաւ, որ ծովեզերքի երկայնքին վրայ երկու մղոն տարածութիւն ունի, իսկ դէպ 'ի ցամաքը շատ տարածուած չէ. ետևի կողմը $100^{\text{էն}}$ մինչուան 150 ոտնաչափ բարձրութեամբ բլուրներ կան ։ Երևելի շէնքերն են քաղաքապետին պալատը, դատաստանարանը, բանտը, մաքսատունը, քարոզչաց մատուռը և դպրոցը ։

Սինկափուրը վաճառականութեան կողմանէ հարաւային Ասիոյ Լոնտրան կը սեպուի. բոլոր սահմանակից ազգերն ու Հնդկային Ովկիանոսի բնակիչները Սինկափուր կը թափեն իրենց բերքերն ու ձեռագործները, և հոնկէ կ'առնեն իրենց հարկաւոր եղած վաճառքները. վասն զի արևելեան ամէն վաճառքներն ալ կը գտնուին հոն, և գրեթէ Եւրոպայի վաճառականութեան հարստութէը հասած է ։ Աս ամէն յառաջադիմութեանց պատճառը ազատ նաւահանգիստ ըլլալն է ։ Անգղիացիք $1824^{\text{ին}}$ երկու ինքնագլուխ իշխաններու ձեռքէ գրեթէ կէս միլիոն Ֆրանքով գնեցին Սինկափուր կղզին, անոր հետ նաև բոլոր ան ծովերուն տիրած եղան ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊԻՆ օգուտները օրէ օր աւելի ճանչցուելով՝ մեծ քաջալերութիւն կ'ըլլայ մեզի որ առանց վհատելու ջանանք ոճը հետզհետէ լաւցնել ։ Ուրիշ մխիթարութիւն մըն ալ աս է մեզի, որ նաև մեր միաբաններէն դուրս գտնուող անձինք (որ ամէնքն ալ ազգային սիրոյն կապովը մեր եղբարքն են) հաւնելով Բազմավէպիս վախճանին, յօժար կամօք հաճեցան այլ և այլ օգտակար ու հետաքրքրական յօդուածներ խրկել մեզի, որ եթէ պատշաճ երևնայ՝ մէջը անցընենք ատենին ։ Թէպէտ այսպիսի բարեսէր անձանցմէ ոմանք չեն ուզեր որ յօդուածներուն տակը իրենց անունը նշանուի, բայց ուրիշները երբոր իրենք իրենցմէ չեն իմացըներ մեզի կամքերնին՝ հարկ կը համարինք անուննին ալ նշանակել յօդուածներուն տակը ։

Ասոնց մէջ գովեստով ու շնորհակալութեամբ յիշատակենք ՊԵՏՐՈՍԵԱՆ ՊՕՂՈՍ վարդապետը, որ իրեն սրամիտ ու գիտող և ուսումնասէր հանճարովը Հայաստանի ու փոքր Ասիայի շատ կողմերը երկար ատեն պտըտեր է, ու տեղեկացած և անձամբ փորձած օգտակար գիտելիքները գիր անցուցեր ու մեզի կը խրկէ որ աս օրագրով հաղորդենք մեր ազգին ։ Իրենն է ահա հետագայ յօդուածը. ըստ ժամանակին կը դնենք նաև ուրիշ յօդուածները՝ նոյնպէս Գ. Գ ստորագրութեամբ՝ որպէս զի որոշուին ուրիշներուն փորձած կամ պատմած գիւտերէն. և կը յուսանք որ կարդացողներն ալ սիրով ու երախտագիտութեամբ ընդունին ։